

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР
(АРЦАХА):
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета
Университета Месроп Маштоц г.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400
L 657

Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия

դ.յ.ն., պրոֆ., акад. НАН РА **Գ.Ս.Կազինյան** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **Ա.Ս.Մանասյան**, д.п.н., проф. **Գ.Մ.Ավանեսյան**, д.и.н., проф. **Վ.Ր.Բալայան**, д.ю.н. **Վ.Վ.Գրուզдев**, д.ю.н., проф. **Ա.Գ.Խաչատրյան**, д.п.н., проф. **Մ.Մ.Մարգարյան**, д.п.н. **Ս.Մ.Մինասյան**, д.э.н., проф. **Վ.Վ.Գրուզдев**, к.и.н., доц. **Ն.Յ.Խաչատրյան**, к.п.н., доц. **Մ.Մ.Մարգарян**, к.э.н., доц. **Ն.Յ.Խաչатрян**, к.ю.н. **Ա.Գ.Արությունյան**, к.ю.н., доц. **Ա.Ա.Մանասян**, к.ю.н., доц. **Ս.Գ.Պետикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորում, 2016

**ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԻՄՆԱԽՆՂԻՐՈՒՄ**

Ռոման ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*Երևանի Պետական Համալսարան
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ
միջազգային հարաբերությունների և
դիվանագիտության ամբիոնի ասիստենտ, պ.գ.թ.
roman.karapetyan@ysu.am*

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը տարածաշրջանի ամենաբարդ հակամարտություններից է: Վերջինս վաղուց դուրս է եկել երկկողմ և տարածաշրջանային մակարդակից՝ իր վրա սևեռելով տարածաշրջանային ու միջազգային ուժային կենտրոնների ուշադրությունը: Հենց այս հանգամանքը, ինչպես նաև տարածաշրջանում վերջիններիս շահերի բախումն ավելի է բարդացնում հիմնախնդրի կարգավորումը՝ ժամանակի ընթացքում ավելի աղոտ դարձնելով դրանում խաղաղ կարգավորման ձևաչափ գտնելու հեռանկարները: Սրան գումարվում է նաև Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունն ու Էներգոդոլարների՝ ռազմական արդյունաբերության վրա ծախսելու փաստը:

Չնայած արդի զարգացումներին, կարծում ենք, որ բանակցող կողմերը դեռևս ամբողջությամբ չեն սպառել հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելու հեռանկարը, իրացված չեն բոլոր հնարավորությունները: Թերևս, չիրացված հնարավորությունների շարքին կարելի է դասել տարածաշրջանում օրեցօր իր ազդեցությունը մեծացնող ու այստեղ իր քաղաքական ու տնտեսական լծակներն ամրացնող երկրներից մեկի՝ Իրանի Իսլամական Հանրապետության գործոնը: Պաշտոնական Թեհրանը մահմեդական աշխարհի այն քիչ երկրներից է, որը ոչ միայն տուրք չի տալիս Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը կրոնական շղարշի տակ ներկայացնելու քայլերին, այլև պահպանում է կառուցողական չեզոք դիրքորոշում դրանում: Հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացում ներգրավվածություն ունենալու ցանկություն պաշտոնական Թեհրանը հայտնել է դեռևս արցախյան պատերազմի տարիներին: Սակայն, պայմանավորված Արևմուտքի հետ ունեցած քաղաքական խնդիրների հետ, Իրանը հնարավորություն չի ունեցել մեծացնել իր դերակատարությունը տարածաշրջանում, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացում: Լինելով Էներգոռեսուրսներ արտահանող պետություն, Իրանի համար կարևորվում է տարածաշրջանում խաղաղության պահպանումը: Իրանը ձգտում է զարգացնել ջերմ հարաբերությունները պաշտոնական Երևանի ու Բաքվի հետ: Հայաստանն Իրանի հարևան քիչ երկրներից է, որի հետ վերջինս չունի քաղաքական բնույթի հակասություններ: Ադրբեջանը Իրանի համար առաջին հերթին կարևորվում է որպես շիա մահմեդական պետություն: Մյուս

կողմից էլ, Իրանում ապրում են ավելի քան մեկ տասնյակ միլիոն Էթնիկ ադրբեջանցիներ: Այս փաստը հաճախ ստիպում է պաշտոնական Թեհրանին հռետորության մակարդակով ավելի մեծ ուշադրություն արժանացնել Ադրբեջանի հետ հարաբերություններին:

1992թ. Իրանը փորձեց միջնորդություն իրականացնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրում: Այն պայմանավորված էր ինչպես իր հյուսիսում անկայունության մթնոլորտի վերացման պահանջով, այնպես էլ՝ Իրանում ապրող ադրբեջանցիների պահանջները բավարարելու հրամայականով: 1992թ. ռազմական գործողություններում հայկական կողմի հաջողություններից հետո Թավրիզում և այլ ադրբեջանաբնակ քաղաքներում սկսեցին տարածվել թռուցիկներ, որոնցով կոչ էր արվում կռվել Ադրբեջանի համար¹: Փաստորեն, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրում միջնորդական առաքելություն իրականացնելիս Իրանի գերխնդիրն էր առաջին հերթին ապահովել անվտանգությունը սահմանի երկայնքով, իսկ հետո՝ իր ներկայությունը Անդրկովկասում: Հիմնախնդրում միջնորդելիս Իրանը հնարավորություն ուներ նաև իրացնելու աշխարհաքաղաքական ավելի լայն շահեր: Նախ, դրանով փորձ էր արվում կասեցնել թյուրքական գործոնի ուժեղացումը տարածաշրջանում, նամանավանդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1992թ. հունվարին Ադրբեջանը ռազմավարական բնույթի պայմանագիր էր ստորագրել Թուրքիայի հետ: Մյուս կողմից էլ, արդիական էր դարձել Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը, իսկ տարածաշրջանում ամրապնդվելը նրան լրացուցիչ խաղաքարտեր կտար այս հարցում:

1992թ. փետրվարի 28-ին Իրանի արտգործնախարար Ա.Վելայեթին ժամանեց Երևան, իսկ այնուհետև՝ Բաքու: Մարտի 20-ին Երևան ժամանեց Իրանի փոխարտգործնախարար Մ.Վայեզին, ով նեկայացրեց արդեն Բաքվի հավանությանն արժանացած իրանական առաջարկները: Այն նախատեսում էր կրակի դադարեցումից անմիջապես հետո դիտորդների, այդ թվում՝ իրանական ներկայացուցիչների տեղակայում հակամարտության գոտում: Իրանն առաջարկում էր կնքել զինադադար մեկ շաբաթով, իրականացնել ապաշրջափակում, փոխանակել գերիներին, իսկ այնուհետև՝ սկսել բանակցությունները Իրանի ու Ռուսաստանի մասնակցությամբ²: Սակայն հայկական կողմի համար անընդունելի էր բանակցություններում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ իրանական առաջարկը: Վերջինս առաջարկում էր, որ Լեռնային Ղարաբաղը հանդես գա դիտորդի կարգավիճակով՝ այնտեղ ապրող ադրբեջանական համայնքի հետ միասին³:

¹ **Բալայան Տ.**, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ., Երևան, 2004, էջ 38

² **Բեգիջանյան Է.**, Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Երևան, 2001, էջ 54

³ **Балаян Т.**, Карабахский конфликт: перемирие на долгосрочную перспективу, «Центральная Азия и Кавказ», N5 (29), Швеция, 2004

Մայիսի 8-ին Իրանի նախագահ Աբբաս Յաշեմի Ռաֆսանջանին, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար, մեջլիսի ղեկավար Յադուբ Մամեդովը Իրանում Ռուսաստանի ղեսպանի ներկայությամբ Թեհրանում ստորագրեցին համատեղ հայտարարություն: Հայտարարությունում կողմերը իրենց կամքն ու պատրաստակամությունն էին հայտնում հիմնախնդրի խաղաղ կարգավորման վերաբերյալ, նախատեսվում էր միջազգային, այդ թվում՝ ԵԱՀԿ դիտորդների տեղակայում հակամարտության գոտում¹: Չնայած այս հայտարարությունը հակամարտության կարգավորման վերաբերյալ որևէ կոնկրետ արդյունք չէր, այն սկսված բանակցային գործընթացի առաջին դրական տեղաշարժերից էր: Սակայն այս գործընթացը դատապարտված էր ձախողման: Հայտարարության ստորագրման օրը համընկավ հայկական ուժերի կողմից Շուշիի ազատագրման օրվա հետ: Մյուս կողմից էլ, մայիսին Ադրբեջանում նախագահ դարձավ Ա.Էլչիբեյը, ով պրոթյուրքական քաղաքականության կողմնակից էր և շեշտը դրել էր ռազմական ճանապարհով հակամարտության կարգավորման վրա: Ադրբեջանի քաղաքական ղեկավարներից շատերը բացահայտ մեղադրանքներ էին հնչեցնում Թեհրանի հասցեին՝ նրան մեղադրելով տարածքների կորստի և հայկական կողմին օգնելու մեջ²:

Իրանի միջնորդական առաքելության հաջող ավարտը ձեռնտու չէր տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոններին: Ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ ԱՄՆ-ն չէին ցանկանում տարածաշրջանում Իրանի դերակատարության բարձրացումը: Պենտագոնը ուղղակի ճնշումներ էր գործադրում պաշտոնական Երևանի և Բաքվի վրա, որպեսզի նրանք հրաժարվեն Իրանի «մատուցած ծառայություններից»: Տարածաշրջանում ԱՄՆ հակաիրանական քաղաքականության վառ վկայությունն է նախկին ԽՍՀՄ երկրների հետ ԱՄՆ ռազմավարության մշակող Ստրոուբ Տելբոտի՝ Անդրկովկասի երկրների մասին 1998թ. Կոնգրեսում ելույթը. «Մենք շարունակում ենք տարածաշրջանի երկրներին հետ պահել Իրանի հետ սերտ կապեր գարգացնելուց: Ավելին, մենք թույլ չենք տա տարածաշրջանի որևէ երկրի այնտեղ քաղաքական կամ տնտեսական հեգեմոն դիրքեր զբաղեցնել: Մենք կշարունակենք աշխատել Կովկասի բոլոր երկրների հետ, որպեսզի կանխենք Իրանի ազդեցության աճը տարածաշրջանում»³:

Պատերազմական գործողությունների ընթացքում Իրանի վերջին արձագանքը հիմնախնդրի առնչությամբ եղել է 1993թ. հուլիսին, երբ հայկական ուժերի կողմից ազատագրվեց Ակնան: Պաշտոնական Թեհրանը մեղադրեց հայկական կողմին նվաճողական քաղաքականության մեջ:

¹ Kazimirov V., Peace to Karabakh, Moscow, 2014, pp. 463-464

² Քալայան Տ., Պարաբալյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ., էջ 41

³ Томас де Ваал, Грузия и ее дальние соседи, Государственность и безопасность: Грузия после «революции роз», Лондон 2005, стр. 381

Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին պաշտոնական այցով մեկնեց Բաքու, որտեղ իր ելույթում մեղադրեց հայերին մահմեդականներին ճնշելու քաղաքականության մեջ¹:

Սա եղել է Իրանի կողմից Լեռնային Ղարաբաղի և Յայաստանի հասցեին հնչած վերջին կոշտ արտահայտությունը, թեպետ իրանական դիվանագիտությունը շարունակում է գործածության մեջ թողնել միջազգայնորեն ընդունված սահմանների անխաթար պահպանման վերաբերյալ իր բանաձևը²: Չնայած պաշտոնական մեղադրանքներին, նույն Ալի Խամենեին մեծ ջանքեր է գործադրել Իսլամական Կոնֆերանսի գագաթաժողովերում, որպեսզի Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը Ադրբեջանի ու Թուրքիայի ակտիվ ջանքերով չընդունվի որպես կրոնական հակամարտություն: Ավելին, մահմեդական աշխարհի ամենաազդեցիկ կազմակերպությունում Իրանը մշտապես կատարել է թյուրքական տանդեմին «սանձողի» դերը: 2016թ. ապրիլին Արցախի և Ադրբեջանի շփման գծում ռազմական գործողությունների ակտիվացումից հետո Իսլամական Կոնֆերանսի հերթական գագաթաժողովում այն բանից հետո, երբ Թուրքիան ու Ադրբեջանը սկսեցին խոսել հայերի կողմից ադրբեջանական տարածքների «գրավման» մասին, Իրանի նախագահ Յասսան Ռոհանին իր ելույթում նշեց, որ յուրաքանչյուր իսլամական պետություն իր ներքին կամ հարևանների հետ ունեցած խնդիրները չպետք է դարձնի Իսլամական Կոնֆերանսի գագաթաժողովների քննարկման առարկա:

2015թ. ամռանը «միջուկային համաձայնագրի» ստորագրումից և ընթացիկ տարվա հունվարից Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների չեղարկման գործընթացի մեկնարկից հետո Իրանն ինտենսիվորեն զարգացնում է հարաբերությունները Յայաստանի ու Ադրբեջանի հետ՝ չմոռանալով ժամանակ առ ժամանակ հիշեցնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրում իր միջնորդության անհրաժեշտության մասին: 2016թ. ապրիլի սկզբին Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի շփման գծում ռազմական գործողությունների ակտիվացման պայմաններում պաշտոնական Թեհրանի առաջարկները սկսեցին ավելի առարկայական տեսք ստանալ՝ կոնկրետ միջնորդական ծառայությունների տեսքով: Թեհրանը Մոսկվայի հետ բանակցություններում նույնպես շեշտադրումներ է անում տարածաշրջանում իր մեծ նշանակության վրա՝ փորձելով հասկացնել, որ առանց նրա մասնակցության հիմնախնդրի կարգավորումն առավել քիչ հնարավորություններ ունի:

Միևնույն ժամանակ, Թեհրանին ձեռնադրել է հայկական զինված ուժերի կողմից Իրանին սահմանակից տարածքների նկատմամբ վերահսկողության պահպանումը, քանի որ դրանք յուրահատուկ բուֆերի դեր կարող են կատարել Ադրբեջանի ու Իրանի հյուսիսի ադրբեջանաբնակ

¹ Зверев А., Спорные границы на Кавказе, 1988-1994, Москва, 1996, стр. 15

² Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան հարևաններ, թե՞ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ախյաններ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXII, Երևան, 2003, էջ 17

ընակավայրերի միջև: Պաշտոնական Բաքուն էլ, իր հերթին, Իրանին չի համարում «ցանկալի միջնորդ»՝ վերջինիս մեղադրելով հայերին օգնելու և իսլամական համերաշխության գաղափարներից հրաժարվելու մեջ: Պաշտոնական Երևանը դեմ չէ իրանական միջնորդությանը, մինչդեռ այն ունի իր վտանգները ևս. արդյո՞ք Իրանի հիմնական նպատակը չէ պահպանել ուժերի հավասարակշռությունը և հայ-ադրբեջանական հակամարտության երկարակետությունը՝ դրանով իսկ որևէ հեռանկար չթողնելով Ադրբեջանի համար զբաղվելու Իրանական Ադրբեջանի խնդրով: Մտահոգիչ է նաև ընթացիկ տարվա հունիս ամսին Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևի հայտարարությունն այն մասին, որ իր երկիրը գենք է գնում նաև Իրանից¹: Յնարավոր է, որ Ադրբեջանի ղեկավարն այս հայտարարությունն արել է հայ-իրանական աճող հարաբերությունների ֆոնին՝ փորձելով սեպ խրել դրանցում, սակայն պաշտոնական Երևանը պարտավոր է այս հարցում ստանալ Թեհրանի բացատրությունը:

Փաստորեն, միջազգային պատժամիջոցների չեղարկման մեկնարկը լավ հնարավորություն է ընձեռել Իրանին առավել ակտիվ ներգրավվելու տարածաշրջանային գործընթացներում, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման միջնորդական բանակցություններում: Տարածաշրջանում Իրանի դերակատարության մեծացմանը զուգընթաց, դժվար է պատկերացնել այստեղ առկա որևէ խնդրի կարգավորում առանց նրա գործուն մասնակցության: Սակայն Իրանական միջնորդության համար առկա խոչընդոտները բազմաթիվ են, որոնք կապվում են Արևմուտքի դիրքորոշման և տարածաշրջանում գերիշխանության համար Թուրքիայի ու Ռուսաստանի միջև մրցակցության հետ:

Ռոման Կարապետյան

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՐԵՈՐՈՇՈՒՄԸ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՈՄ

Բանալի բառեր՝ *Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, Իրան, տարածաշրջան, անվտանգություն*

Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ զարգացումները ցույց են տալիս, որ դրա կարգավորմանն ուղղված առկա ձևաչափերը հիմնականում սպառնել են իրենց: Մինչդեռ իրացված չեն հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելու բոլոր հնարավորությունները: Դրանց շարքին է դասվում իրանական գործոնը: Իրանը պահպանում է չեզոքություն հիմնախնդրում, ունի միջնորդության փորձ և մեծ շանսեր՝ դառնալու կառուցողական միջնորդ: Կարծում ենք, որ Իրանի շահերից է բխում հիմնախնդրում ստատուս-քվոյի պահպանումը:

¹ Сенсационное заявление Ильхама Алиева об Иране
<http://www.vestikavkaza.ru/analytics/Sensatsionnoe-zayavlenie-Ilkhama-Alieva-ob-Irane.html> © - Вестник Кавказа

Роман Карапетян

ПОЗИЦИЯ ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКИ ИРАН ПО НАГОРНО-КАРАБАХСКОЙ ПРОБЛЕМЕ

Ключевые слова: *Нагорно-Карабахский конфликт, Иран, регион, безопасность*

Развитие событий вокруг карабахского конфликта показывает, что существующие форматы, направленные на решение конфликта, в основном исчерпали себя. В то же время, не исчерпаны все возможности мирного урегулирования вопроса. Среди нереализованных возможностей включиться иранский фактор. Иран сохраняет нейтралитет в конфликте, имеет опыт посредничества и большие шансы стать конструктивным посредником. Со всем этим, мы считаем, что Иран заинтересован в сохранении статус-кво в этом вопросе.

Roman Karapetyan

POSITION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN ON NAGORNO-KARABAKH ISSUE

Key words: *Nagorno-Karabakh conflict, Iran, region, security*

Developments around the Nagorno-Karabakh conflict show that the existing format, aimed to resolving the conflict is mainly exhausted itself. In any case, not all opportunities are realized. Among unrealized opportunities we include Iranian factor. Iran keeps neutrality in the conflict, has mediation experience and has great chances of becoming a constructive mediator. With all this, we think, that Iran is interested in maintaining status quo in the issue.